ՓԵՏՐՎԱՐԸ ԵՆԿ-Ի ՀԵՏ

Սիրելի՛ ընթերցողներ, սիրով ներկայացնում ենք Ձեզ ԵՆԿ հերթական ամսաթերթը, որում կպատմենք կազմակերպության փետրվար ամսվա անցուդարձի մասին:

ԻՏԱԼԵՐԵՆԻ ԱԿՈՒՄԲ

Գյումրու «Երիտասարդական նախաձեռնությունների կենտրոն» ՀԿ-ում մեկնարկեց իտալերենի սկսնակների ակումբը:
Առաջին հանդիպման ընթացքում մասնակիցներն հնարավորություն ունեցան ծանոթացման խաղերի օգնությամբ ճանաչել միմյանց ու ակումբավարներին, ինչպես նաև ներկայացվեց ակումբների վարման կարգը և ձևաչափը: Ö
Ակումբի մասնակիցներին մաղթումենք արդյունավետ ու հետաքրքիր աշխատանք: ☺

ԿԱՐԴԱԼ ԱՎԵԼԻՆ

«CITIES OF YOUTH» ԾՐԱԳԻՐ

Մենք սկսեցին երիտասարդական աշխատողների կարողությունների զարգացման միջազգային դասընթաց

Դասընթացն իրականացվում է «Երիտասարդների քաղաք. զբոսաշրջային ենթակառուցվածքների զարգացման գործում երիտասարդների դերի բարձրացում» խորագրով ծրագրի շրջանակներում
Եվրոպական միությանԷրազմուս+ ծրագրի աջակցությամբ:

ԿԱՐԴԱԼ ԱՎԵԼԻՆ

ՏՅԱՌԸՆԴԱՌԱՋԸ «ԵՐԻՏԱՍԱՐԴՆԵՐԻ ՏՈՒՆ» ԲԱՑ ԵՐԻՏԱՍԱՐԴԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆՈՒՄ

Փետրվարի 15- ին Գյումրու« Երիտասարդական նախաձեռնությունների կենտրոնի» «Երիտասարդների տուն» բաց երիտասարդական կենտրոնում նշվեց Տյառնընդառաջը՝ ժողովրդական երգով, ավանդական խաղերով, տոնին բնորոշ խորհուրդներով ու ուտեստներով և իհարկե բարձր տրամադրությամբ:

ԿԱՐԴԱԼ ԱՎԵԼԻՆ

ՄԱՐՔԵԹԻՆԳԻ ՈՒ ՖՈՆԴԱՀԱՅԹԱՅԹՄԱՆ ԹԵՄԱՅՈՎ ԴԱՍԸՆԹԱՑ ԵՆԿ-ՈՒՄ

Փետրվարի 25-ին, Գյումրու «Երիտասարդական նախաձեռնությունների կենտրոն» ՀԿ-ում հյուրընկալեցինք «Together for Armenia» հարթակի փորձագետ Գայանե Խաչատրյանին, ով այցելել էր մեզ մարքեթինգի և ֆոնդահայթայթման թեմայով իր փորձով կիսվելու և ոլորտով հոտաքրքրվող սկսնակներին մասնագիտական ուղղությունցույց տալու համար:

ՇԱՐԺՈՒՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ԵՆԿ-Ի ՀԵՏ

Ուրախ ենք տեղեկացնելու, որ Չեխիայի Բրնո քաղաքում փետրվարի 2-ին մեկնարկեց «CauCAN-Counter and Alternative Narratives For Human Rights in the Caucasus» երկարաժամկետ Էրազմուս+ ծրագրի ներքո միջազգային երիտասարդական փոխանակման ծրագիրը՝ մարդու իրավունքների և հակադիր ու այլընտրանքային պատմություններիթեմայով:

Իսպանիայի Սանտանդեր քաղաքում փետրվարի 17-ին մեկնարկեց «InterGENERATIONAL» Էրազմուս+ միջազգային դասընթաց միջսերնդային փոխանակման թեմայով:

Ինչպես նաև այս ամիս ունեցել ենք երկու ծրագրային հնարավորություն՝

- Էրազմուս+ միջազգային դասընթաց ձեռնարկատիրական աջակցման թեմայով, Իսպանիայի Ռասկաֆրիա քաղաքում,

- Էրազմուս+ երիտասարդական փոխանակման ծրագիր կլիմայական փոփոխություններիթեմայով:

- Էրազմուս+ միջազգային դասընթաց երիտասարդական աշխատողների համար:

- Էրազմուս+ միջազգային դասընթաց սոցիալական ձեռնարկատիրության թեմայով:

- Էրազմուս+ միջազգային դասընթաց երիտասարդների մասնակցության թեմայով:

ՓԵՏՐՎԱՐԸ «ԵՐԻՏԱՍԱՐԴՆԵՐԻ ՏԱՆԸ»

«Երիտասարդների տանը» շարունակվում են թեմատիկ շաբաթները, բազմազան կրթական դասընթացներն ու միջոցառումները:
Ակտիվ քննարկումներով է անցնում կենտրոնում կազմակերպվող ակումբները: Այս ամիս բանավեճի ակումբի շրջանակներում պատանիները քննարկեցին «Կանանց և տղամարդկանց իրավունքների հավասարությունը Հայաստանում» թեման:
Գրքասերների ակումբի մասնակիցները ճանաչողական այցով Շիրակի Մարզային գրադարանում ծանոթացան գրադարանավարության գործին, ապա ընթերցասրահում կազմակերպեցին օրվա քննարկումը:
« Երիտասարդների տանը» հյուրընկալվեց Հայաստանի « Մարտական խաչ» 2- րդ աստիճանի շքանշանի ասպետ, քառօրյա պատերազմի մասնակից Շուլի Հակոբյանը, ով պատանիների հետ կիսվեց բանակում ծառայելու կարևորությունից մասնագիտական հաջողություններից ու մարդկային ամենամեծ արժեքներից:
«Մի փունջ սեր» թեմատիկ շաբաթը նվիրված էր Սուրբ Սարգսի տոնին:
«Երիտասարդների տան» սաների կողմից իրականացվեց Տյառնընդառաջին նվիրված միջոցառում որն ուղեկցվեց տոնի վերաբերյալ բեմականացմամբ, երգով, ավանդական խաղերով, տոնին բնորոշ խորհուրդներով և ուտեստներով: Միջոցառմանը հանդես եկավ « Հրայրք» ազգագրական երգ ու պարի խումբը, որը կազմակերպեց նաև պարուսուցում
Բուն Բարեկենդանի տոնակատարության ժամանակ « ԵՆԿ» ՀԿ-ն հանդես եկավ իր տեղեկատվական տաղավարով, որտեղ «Երիտասարդների տան» սաները ներկայացրեցին օճառագործության ակումբի շրջանակներում իրենց ձեռքով պատրաստած էկոլոգիապես մաքուր օճառները:
Գյումրու« ԵՆԿ» ՀԿ կողմից հյուրընկալած «Cities of Y OUth» միջազգային ծրագրի մասնակից երիտասարդական աշխատողները ճանաչողական այցով եղան «Երիտասարդների տանը», ծանոթացան կենտրոնի գործունեությանն ու ծրագրերին, իսկ պատանիների համար կազմակերպեցին ուսուցողական աշխատարաններ:
Ձմռան վերջին օրը նշանավորվեց Աշոցքում կազմակերպված « Շիրակի Ձմեռ-2020թ» միջոցառմամբ, որին մասնակցեցին «Երիտասարդների տան» թիմն ու պատանիները:
Այսպիսին էր փետրվարը «Երիտասարդների տանը» J

ՀԵՏԵՎԵԼ ԷՋԻՆ